

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ.

ՔԱՂԱՌԱԾՔ Ի ԿՈՆՏԱԿՏՑ ՎԵՋ. ՀԱՅՐԱՊԵՏԻ

Կոնստանտինոպոլիսի սրբոյ Էջմիածնի սրով պատուիրի զործ քննութեան վասն ծառայողաց Կոնստանտինոպոլիսի յանձնել թեմակալի տեղւոյն. թ. 948.

— Յանուսն թեմակալին Վրաստանի և Իմերէթի Տ. Գէորգ արքեպիսկոպոսի ընդ որում առաքեցաւ չէք մի ի դուռնոր 1585 ռ. 45 կող. առաքեալ ի ձեռն Ամենապատիւ Պատրիարքին Հայոց Կ. Պօլսոյ, վասն ստանալոյ զդուռնորն և յանձնելոյ նահանգապետին Տփլիսաց յողուտ արկածելոյ Ախալքալաքի: թ. 970.

— Յանուսն Ամենապատիւ Պատրիարքին Կոստանդնուպօլսոյ և կրօնական ժողովոյ, որով պատուիրի ներողութիւն շնորհել Աբրահամ եպիսկոպոսի Մամիկանեան միաբանի Սոյ: թ. 981.

— Յանուսն հոգաբարձութեան Հոգեւոր դպրանոցին Երեւանայ, որով հաստատի ի տեսուչ թիշի Գէորգ Տառնան. թ. 984.

— Յանուսն Արեւիկի ա. Էջմիածնի յաղագս կարգելոյ զՆսայի վարդապետն ի վանահայր Վանուց ա. Եղիշէ առաքելոյ նուխուայ. թ. 989.

— Յանուսն եղբարց պ. պ. Զաքարիայեանց ի Բաքու, որով յայտնեցաւ նոցա ընտրութիւն որդեկորին իւրեանց յանձին Արամայ Ոլթեցեան Կարսեցւոյ. թ. 999.

— Մամրէ քահանայի Վարդանեան փոխանորդի առաջնորդութեան հայոց Եզիպատի, որով անլուծանելի համարեցաւ պսակըն Պետրոս Հարիբ պէյի ժօրժ ընդ կնոջն իւրում Ծօթինէի թ. 1021.

ՔԱՂԱՌԱԾՔ ՍԵՆՈՂԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Օգոստ. 25. Ախալքալաքի երկրաշարժից փնասուածների օգտին հաւաքուած 503 ռ. 50 կ. ուղարկել Թիֆլիս՝ Խնամատար Յանձնաժողովին:

Օգոստ. 25. Տփլիսեցի Յովհաննէս Աւանանցի պսակը լուծել իւր կնոջ Մարիամ Գանդուբեանցի և վերջինս միայն թոյլ տալ ամուսնանալու ուրիշի հետ:

Օգոստ. 30. Բերայու գիւղի բնակչուհի Մարգարիտ Գալստեանցի ուրիշի հետ ապօրինի կենակցելու պատճառով լուծել նրա պսակը Բարսեղ Ղազարեանցի հետ և վերջինս միայն թոյլ տալ նորից ամուսնանալու:

Սեպտ. 4. Պատուիրել Կոնստանտինոպոլիսի Հայոց Վրաստանի և Իմերէթի կարգադուրկ անել Գողթանը գիւղի Աւետիս քահանայ Աւետիսեանցին և դարձնել սոսկ աշխարհական թոնրի վերայ պսակ կատարելու համար:

Սեպտ. 6. Տող (Գանձալի նահանգ) գիւղի Յովհաննէս քահ. Տէր Յակովբեանցին և Սարգիս քահ. Տէր Պօղոսեանցին իրանց անվայել վարքի համար՝ առաջին երեք ամիս ապաշխարութեան ենթարկել Գանձասարի վանքում: Իսկ երկրորդին մարմնաւոր իշխանութեան յանձնել՝ առանց հրամանի վեցերորդ աստիճանի աղգակցութեան պսակ կատարելու համար:

Սեպտ. 13. Շահաբ գիւղի բնակիչ Մարտիրոս Վարդանեանի և նորա կնոջ Սանդուխտ Յակովբեանի պսակը լուծել վերջնոյս անբարոյականութեան պատճառով և հրաման տալ նորից ամուսնանալու Մարտիրոս Վարդանեանցին:

Սեպտ. 25 Վրաստանի և Իմերէթի թեմի ուխտատեղերից գոյացած արդիւնքից տարե-


կան եօթ հարիւր բուր, նպաստ ապ կրեանի
Կոնսիստորիայի միջոցով այլի տիկին Արտվեան-
ցին և պ. Մ. Պալեանցին:

Ա Ձ Դ.

Ի ԳԻՒԱՆԷ ԿԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Այսու յայտարարի ի գիտութիւն Գե-
րապատիւ Առաջնորդաց, Կոնսիստորիայից,
Բարեշնորհ փոխանորդաց, Հոգեւոր կառավա-
րութեանց, Գործակալաց և համայն հոգեւոր
և աշխարհիկ դասու մերազնեից եթէ ՆՈՐԻՆ
ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԻՒՆ ՀՈԳԵՒՈՐ ՏԷՐՆ Ազգիս
ի նկատ առեալ զբաղմադիմի բողոքս արառն-
ջըս և անբաւականութիւնս վերաբերեալս ա-
պօրինի և աններկի պատկաց, անվայել և ան-
պատշաճ վարմանց Տաճկահայաստանի Մաշա-
տուր քահանայի Տէր Զարութիւնեանց Զորուկ
գեղջ Ալաշկերտացոյ ի վիճակս Կարուց և
Ազէքսանդրապոլի, իսպառ կարգադուրկ
արար ի քահանայական կոչմանէ և աստիճանէ
զմիշեալ Մաշատուրն Տէր Զարութիւնեանց:

Աւստի ուր ուրեք և պատահեցի յիշ-
շեալ կարգադուրկն, չձանաչել զնա որպէս
քահանայ և կատարող հոգեւոր պաշտամանց և
օրինակատարութեանց այլ սոսկ աշխարհիկ ոմն:



ԿՐՕՆԱԿԱՆ

ԿՐՕՆԱԿԱՆ ԱՆՁՆԱԿՈՐՈՒԹԻՒՆ

Ա.

ԱՌԱՆՅ կրօնական կեանքի ի զուր է
մեր եկեղեցու հոգեւոր վերածնու-
թեան մասին մտածել. ժողովրդի բարոյական

և հոգեւոր շարժման գիտութեան և քաղա-
քակրթութեան առողջ զարգացան առաջին
պայմանը կրօնական վերակենդանութիւնն է:
Այս միտքը շատ անգամ շօշափել ենք Արա-
րատի էջերում. ներկայիս կամենում ենք
առանձին խորհրդածութեան նիւթ դարձնել
թէ ի՞նչ է նշանակում կրօնական անձնաւո-
րութիւն լինել որով և յոյս ունինք թէ
մեր բնիկեցողներն համար կարգուի այն
խնդիրը, թէ որքան իրաւունք ունինք այդ
միտքը իրրեւ ճշմարտութիւն քարոզելու:

Մի քանի խօսքով պարզենք նախ թէ
ինչ է կրօնը որպէս զի աւելի գիւրութեամբ
կարողանանք պատասխանել թէ ի՞նչ է նշա-
նակում կրօնական անձնաւորութիւն լինել:
Մարդու և Աստուծոյ յարաբերութիւնն է
կրօնը. նա ծագում է այն հաւատից, թէ
կայ մէկը, որ տիեզերքի և մեր ներքին աշ-
խարհի Տէրն ու Կառավարիչն է: Ասածուն
որոնել ու գտնել Աստուծով յուսալ սիրել
ապրել և մեռնել կրօնի էութիւնը, նպատակն
ու բովանդակութիւնն է կազմում: Աստուծոյ
և մարդկային հոգու յարաբերութիւնը կա-
տարւում է ազօթքով, լինի անմահեաց, թէ
խօսքով, որ կրօնի մէջ ամենից էականն է:
Ով ազօթել չի կարող ճշմարտութեամբ, նա չէ
կարող կրօնական լինել բառի աղնիւ իմաստով:
Որովհետեւ անբիծ, անարատ սրտով ազօթել
նշանակում է մեր ներքին հոգեկան աշխարհը
իւր բոլոր դադանիքներով Աստուծոյ առաջ
գնել, նշանակում է ամենաթանկագին զոհա-
բերութիւնն տնել, այսինքն Աստուծոն նուէր
բերել մեր սիրտը, մեր հոգին, ոչնչացնել մեր
հոն ու էութիւնը Աստուծու կամքը կատարե-
լու: Աստուծոյ համար ապրելու նպատակով:
Այսպիսի զոհաբերութիւնը միմիայն խորին
սիրուց կարող է բղխել ուստի և հասկանալի
պէտք է լինի թէ ինչու Տէրը ամենից մեծ
պատուէրը կրօնի մէջ դէպի Աստուած ունե-
ցած սէրն է համարում:

Այսպէս գտաւորով՝ ինքնին հասկանա-
լի է, որ մեր հասկացողութեամբ ազօթքի
բոլորները մարդու կեանքի մէջ ամենից նուե-
րական ժամերն են և ուրիմն հայհոյութիւն
է այն կարծիքը, թէ ազօթելը ժամանակի
կորուստ է: Ազօթել և յոյսն Աստուծոյ վի-